ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 մարտի 2022 թվականի N 79-Ա

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԳԵՂԻԻ ՅՈՒ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի N 12 արձանագրությունը *(որոշումը)* և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի N 288-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. ***Մարինե Հրանտի Խաչատրյանին*** 2022 թվականի մարտի 9-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 18-ի *«Ա. Հարությունյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 380-Ա որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մարտի 09
ք. Հրազդան